«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման - Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ - Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ - Գայանե Մկրտչյան

Ուսումնական հաստատություն՝ - Թալինի թիվ 1 հիմնական դպրոց

Երևան 2022

Երևան – 2022

Բովանդակություն

1. Ներածություն
2. Հետազոտական համատեքստ
3. Գործնական համատեքստ
4. Հետազոտության ընթացք
5. Եզրակացություն
6. Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Ուսուցումը անցյալի փորձի վրա ձևավորված ադապտիվ անհատական վարքի փոփխուփյունն է:

Ուսուցման շնորհիվ մարդու և կենդանիների գիտելիքները թարմանում են, ձեռք են բերում նոր հմտություններ և կարողություններ, ինչը հանգեցնում է առավել հարմարվողական վարքի ձևավորումը:

Ուսուցումը կատարվում է ավանդական և ժամանակակից մեթոդներով, որոնք հաճախ հակադրվում են: Սակայն այդ մոտեցումը հիմնավորված չէ: <<Նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում : Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ- որ իրավիճակում կարող են օգտակար լինել>>: (1)

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին:

<<Համաշխարհային կրթական համակարգը առավել շատ վերջին տարիներին հակված է ուսուցման նոր՝ համագործակցային մեթոդների միջոցով սովորողների ինքնուսուցման և ուսուցման կազմակերպմանը>>: (2)

Ինչպես նոր գործիքի, սարքավորման օգտագործումը բարձրացնում է ժամանակակից արհեստավորի աշխատանքի արդյունավետությունն ու որակը, այնպես էլ համագործակցային ուսուցումը հնարավորություն է տալիս ուսուցչին և աշակերտներին դասապրոցեսը դարձնել ավելի բազմազան և հետաքրքիր:

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է նոր նյութի ուսումնասիրության փուլում առանց պատմելու՝ համագործակցային մեթոդով ուսումնառության ռազմավարության դիտարկումը:

Նպատակին հասնելու համար սահմանվում է հետևյալ խնդիրները

Ա. Համագործակցային մեթոդով անցկացնել դաս՝ ընտրելով համեմատաբար բարդ թեմա (Համաշխարհային պատմությունից)

---

1. Խաչատրյան et al. 2020, էջ 21
2. Վիրաբյան,Սարգսյան, 2009, էջ 3

Բ. Ուսումնասիրել աշակերտների ակտիվությունն ու ներգրավվածությունը դասին:

Գ. Խրախուսել դասի ընթացքում աշակերտների մեջ համագործակցային կարողությունների ցուցաբերումը:

Դ. Պարզել, թե արդյոք հասկացան նոր դասը:

Ե. Համեմատել համագործակցային մեթոդով դասը ավանդականի հետ:

Ես ակնկալում եմ , որ համագործակցային մեթոդը ավելի արդյունավետ կլինի և նախկին մեթոդների հետ համեմատության մեջ ավելի շատ առավելություններ կունենան:

Հետազոտական համատեքստ

Հետազոտական աշխատանքը գրելիս ուսումնասիրել եմ մասնագետների տարբեր կարծիքներ ավանդական և ժամանակակից մեթոդների վերաբերյալ, ուսումնասիրել տարբեր մեթոդներ, մեթոդական ձեռնարկներ, ինչպիսիք են Վիրաբյանի, Մարգարյանի <<Հետաքրքրաշարժ զրույցներ գրականությունից. Հայոց լեզվի մի քանի մեթոդներ>> , << Համաշխարհային պատմություն 8-րդ դասարանում>> մեթոդական ուղեցույցը, Ս.Խաչատրյանի << Ուսուցման արդյունավետ հնարներ>> աշխատությունը և այլն: Օգտվել եմ նաև Հանրակրթական պետական չափորոշչից, ինչպես նաև համացանցից:

Ժամանակակից համագործակցային մեթոդները նախատեսում են գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Այդ մեթոդները բավականին ժամանակ են պահանջում, ուստի անհնար է ողջ ուսուցումը անցկացնել միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ,ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը: <<Պատշաճ տեղ հատկացնելով և բոլորովին էլ չթերագնահատելով ուսուցման ավանդական մեթոդների դերն ու նշանակությունը՝ ընգծում ենք, որ այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը գործնականորեն շատ կարևոր է և հրատապ >>: (1)

Համագործակցային ուսուցումն ունի նաև հասարակական գործառույթ:Մարդիկ ավելի ու ավելի կարիք ունեն աշխատելու խմբերով: Սա հատկապես գերխնդիր է մեր հսարակության համար, քանի որ հայերս սովորաբար ավելի հաջողակ ենք անհատական գործունեության մեջ, քան՝ խմբային:

Մեր հասարակության մեջ խնդիրների լուծման գրեթե բոլոր գործընթացները տեղի են ունենում տարբեր խմբերում՝ մասնագիտական աշխատակազմ, ընտանիք, ընկերախումբ: Խնդրի լուծումը իր բնույթով համագործակցային գործընթաց է, հետևաբար, որպեսզի խնդիրը լուծվի սովորողը պետք է ձեռք բերի միջանձնային և խմբային հաղորդակցության ունակություն:Այսպիսի ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուոսուցիչը չի նատուցում պատրաստի գիտելիքներ, այլ ենթադրում է աշակերտների կողմից գիտելիքների ինքնուրույն ձեռք բերում: << Համագործակցային մեթոդների կարիքն զգացվում է հատկապես առաջադիմության տարբեր մակարդակներ դրսևորող լսարաններում>>: (2)

1.Վիրաբյան,Սարգսյան, 2009 էջ 84

2.Վիրաբյան,Սարգսյան, 2009, էջ 85

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներ ներգրավվել ինքնուրույն իմացական գործունեության մեջ,ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորոցնել կիրառել սովորած գիտելիքները: << Աշակերտների համատեղ ուսումնական գործունեության հիմնական ձևը միմիյանց սովորեցնելն է:Ամեն աշակերտ ոչ միայն սովորող է, այլև սովորոցնող>>: (1)

Գործնական համատեքստ

Նոր նյութի ուսումնասիրության փուլում առանց պատմելու՝ համագործակցային մեթոդով ուսումնառության արդյունավետության դիտարկման համար ընտրել եմ <<Խճանկար >> մեթոդը, որը կիրառել եմ 8-րդ դասարանում համաշխարհային պատմության դասաժամին:

Խճանկարը (Ջիգսո) համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության համեմատ ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի գաղափարների, որոշակի հինախնդիրների մեջ և դրանք ուսուցանում են դասընկերներին: Այն ունի փուլեր՝ նյութի ուսումնասիրության և տղեկատվության հավաքում, աշխատանք փորձագիտական խմբում, աշխատանք ուսումնական խմբում,ավարտական աշխատանք,ամփոփում:

Աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի:Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթախմբի << փորձագետ>>: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման:

Հետո փորձագիտական խմբերի աշակերտները համեմատում են և հարստացնում են իրենց նյութերը: Յուրաքանչյուր փորձագետ հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:

Իմ դասի թեման է Լուսավորության դարաշրջանը: Այն բաժանել եմ հինգ մասի.

Լուսավորական գաղափարախոսությունը

Լուսավորությունն Անգլիայում

Լուսավորությունը Ֆրանսիայում

Լուսավորությունն ԱՄՆ-ում

Լուսավորյալ միապետերը

Ընտրվել է համեմատաբար բարդ թեմա: Անցած տարիների փորձը ցույց է տվել, որ ավանդական ուսուցմամբ այս թեման աշակերտները շատ դժվար են ընկալում: Դասի համար նախատեսված է երկու դասաժամ: Դասարանը բաժանել եմ հինգ հոգուց բախկացած հինգ խմբերի: Խմբերի բաժանում կատարել եմ պատահականության սկզբունքով:

Հետազոտության ընթացքը

Ինչպես նշել եմ դասի թեման Լուսավորության դարաշրջանն էր: Դասի նպատակն էր թեմայի վերաբերյալ տարրական գիտելիքների վերհանում, ընդլայնում և խորացում, և որ ամենակարևորն է՝ սովորողների մեջ համագործակցային կարողության ձևավորումը:

Վերջնարդյունքը պետք է լինի աշակերտների կողմից.

Լուսավորության դարաշրջանը պատկերացնելը

Անգլիական,ֆրանսիական և ամերիկյան լուսավորիչներին ճանաչելը:

Լուսավորիչների գաղափարախոսությունը ներկայացնելը և վերլուծելը, ինչպես նաև դրանց համեմատությունը:

Լուսավորյալ միապետերին ներկայացնելը և լուսավորական գաղափարների ազդեցությունը նրանց կառավարման համակարգի վրա ներկայացնելը:

Ուսումնական նյութը ընտրվել է դպրոցական դասագրքից և դասագրքի առաջադրանքներից:

Դասարանը բաժանվել է 5 հոգանոց խմբերի, որոնցում կան 5 աշակերտ:Խմբի յուրաքանչյուր աշակերտ ունի պատահականության սկզբունքով իր համար՝ 1, 2, 3, 4, 5:

Ամբողջ դասը բաժանվել է 5 մասի (ըստ ենթավերնագրերի): Համարակալված ենթավերնագրերը բաժանվել են խմբի՝ նույն համարներով անդամների, համար 1 աշակերտը ստացել է համար 1 նյութը, համար 2 աշակերտը՝ համար 2 նյութը, համար 3 աշակերտը՝ 3 նյութը,համար 4 աշակերտը՝ համար 4 նյութը, համար 5 աշակերտ՝ համար 5 նյութը: Նրանց տրվել է 15 րոպե որպեսզի յուրացնեն իրենց հասանելի նյութը:

Այնուհետև աշակերտները վերախմբավորվեցին՝ կազմելով փորձագիտական խմբեր: Առաջին համարները հավաքվեցին մի խմբում, երկրորդ համարները՝ մի խմբում, երրորդ համարները՝ մի խմբում, չորրորդ համարները՝ մի խմբում, հինգերորդ համարները՝ մի խմբում:

Նույ նյութը սովորած աշակերտները իրնց փորձագիտական խմբերում կրկնեցին, խորացրին, քննարկեցին և պարզաբանեցին իրենց նյութը:

Այս գործողությունը տևեց 10 րոպե:

Այնուհետև փորձագիտական խմբերից աշակերտները վերադարձան իրենց խմբերը

(մայր խումբ), և յուրաքանչյուրը մյուսներին սովորեցրեց իր սովորած հատվածը այնպես,որ ամբողջ նյութը սովորեցին խմբի բոլոր անդամները:

Այս աշխատանքը տևեց 20 րոպե:

Իմ դիտարկմամբ բոլոր աշակերտները մոտիվացված են, ակտիվ էին, ու բոլորը ներգրավված էին նոր նյութի ուսումնասիրության մեջ:

Այս դասարանում 12 աշակերտ սովորաբար ունի բարձր մոտիվացիա, 9-ը՝ միջին,իսկ 4 աշակերտ ունի ցածր մոտիվացիա:

Այս աշխատանքի ժամանակ ցածր մոտիվացիա ունեցող աշակերտներն էլ ներգրավված էին դասապրոցեսի մեջ: Բոլորը իրենց վրա վերցրել էին ընկերներին սովորեցնելու պատասխանատվությունը, ինչպես նաև նկատվում էր մյուս աշակերտների նյութը մեծ ցանկությունը;

Մենք՝ուսուցիչներս լավ գիտենք, որ ավանդական ուսուցման ժամանակ որոշ աշակերտներ այդպիսի ցանկություն չեն ունենում նոր նյութը սովորելու և հատկապես որևէ պատասխանատվություն իրենց վրա չեն զգում:

Սովորաբար ավանդական դասավանդման ժամանակ նշված դասարանում ակտիվությունը մեծ է,սակայն ամբողջ դասարանի հավասարաչափ ներգրավվածություն և ակտիվություն չի լինում:

Նկատում եմ, որ միշ լինում են մի քանի աշակերտներ,որ ուշադիր չեն, կարող են ուրիշ բանով զբաղվել, եթե այդ պահին նրանց որևէ հանձնարարություն տրված չէ:

Այս մեթոդի ամենամեծ առավելությունը բոլորի հավասարաչափ ներգրավվածությունն էր դասին, և այն, որ բոլորը իրենց վրա կրում էին սովորողի և սովորեցնողի պարտականությունները:

Երկրորդ դասաժամին դասը բաժանեցի երկու մասի.

առաջին 25 րոպեն կատարեցի դասի բանավոր հարցում, ընդորում ես ինքս էի որոշում,թե,որ՝ աշակերտը ,որ՝ թեման պետք է պատմի:

Բանավոր հարցման արդյունքից ես գոհ էի,որովհետև հասել էի վերջնարդյունքի.

այն է՝

աշակերտները պատկերացնում էին Լուսավորականության դարաշրջանը

Ճանաչում էին առաջադեմ լուսավորիչներին

ներկայացնում էին լուսավորականության գաղափարախոսությունը

թվարկում էին լուսավորյալ միապետերին

և որ ամենակարևորն է համեմատություններ էին կատարում մեր ժամանակաշրջանի հետ:

Իսկ դասի վերջին 20 րոպեն աշակերտներին հանձնարարվեց լրացնել տվյալ թեմային համապատասխան և իմ կողմից կազմված թեստային աշխատանք:

Ի զարմանս ինձ ամբողջ դասարանը ցուցաբերեց բարձր առաջադիմություն:

Աշակերտները ևս գոհ էին:

բոլորը դասը հասկացել էին

դասավանդման ձևը իրենց հետաքրքիր էր:

Եզրակացություն

Ինչպես արդեն նշել էի,իմ հետազոտության նպատակն էր դասավանդման գործընթացում աշակերտների մեջ համագործակցային կարողություն ձևավորելը և այդ միջոցով դասը ավելի արդյունավետ դարձնել:Իմ խնդիրը նաև համագործակցային մեթոդով դասապրոցեսը ավելի ակտիվ դարձնելն էր, ինչպես նաև ամբողջ դասարանին դասապրոցեսի մեջ ներգրավվելը, ավանդականի և համագործակցայինի համեմատությունը՝ նշելով առավելությունները և թերությունները:

Իհարկե թերություններ կարելի է նշել (աղմուկը,բարձր քննարկումները,ուսուցչի ամեն խմբում լինելը), սակայն ամենակրևոր առավելությունը բոլոր աշակերտների ակտիվ լինելն էր և ներգրավվածությունը դասապրոցեսին: Այսպիսով, համագործակցային մեթոդի ազդեցությունը նոր նյութի յուրացման վրա բավականին արդյունավետ է:

Համագործակցային մեթոդով դասավանդման ժամանակ անհամեմատ բարձր է աշակերտների ակտիվությունը և ներգրավվածությունը դասին, և այդ մեթոդով կարելի է սովորել չսիրող, անուշադիր աշակերտներին ներգրավել դասապրոցեսի մեջ:

Մենք հաճախ ենք դժգոհում,թե աշակերտներին դասը չի հետաքրքրում,բայց համագործակցային մեթոդի ձևը դասը դարձնում է հետաքրքիր երեխաների համար:

Եթե աշակերտը հասկանում է դասը, ապա շատ լավ սովորեցնում է մյուս աշակերտներին:

Այս ամենով հանդերձ ուսուցիչը այնուամենայնիվ դասը բացատրում է, սակայն դա խմբերի ներսում անում է բավականին աննկատ...

Գրականության ցանկ

1. Ս.Խաչատրյան et al, (2022), Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան Ֆրիդրիխ էբերտ հիմնադրամ
2. *Ն.Վիրաբյան,Լ.Մարգարյան, (2009).* Հետաքրքրաշարժ զրույցներ գրականությունից, Հայոց լեզվի ուսուցման մի քանի մեթոդներ, Երևան, Մակմիլան - Արմենիա:
3. Ն.Հովհաննիսյան, Ա.ՂուկասյաՆ Համաշխարհային պատմություն 8-րդ դասարան, Մեթոդական ուղեցույց, Երևան 2013թ. էդիթ Պրինտ հրատարակչություն: